վրայ առաջարկելով Աւարայրի դաշտը տեղադրել Կարազիադինի հարթավայրի մօտ՝ Կոտուր գետի ձախ վտակ Ակ-չայի ափերին»[1]:

Իրօք, Հ. Աղաբէկեանն առաջին անգամ էր մանրակրկիտ անդրադառնում Աւարայրի տեղորոշման փաստարկներին, ընդ որում նախապէս ժամանակագրական հերթականութեամբ եւ 8 կէտերում ամփոփելով տուեալ հարցադրման մասին մինչ այդ եղած գրեթէ բոլոր տեսակէտները[2]: Մեզ համար առաւել արդիւնաւէտ կը լինի՝ վերաշարադրելու փոխարէն ստորեւ թարգմանաբար վերարտադրել (որոշ ծանօթագրումների յաւելումով) Հ. Աղաբէկեանի այդ կէտերի բովանդակութիւնը.

«1. Հայաստանի քարտէզում, որը կազմուել է 1751 թ. Վենետիկի Մխիթարեանների կողմից, Տղմուտը արդի Մակու-չայ (Զանգեմար) կոչուող գետն է: Իսկ նրանց իսկ կողմից 1849 թ. հրատարակուած քարտէզում որպէս Տղմուտ է նշուած Մակու-չայի վտակ Ղըզլար-չայը: Այդ քարտէզում Զէյւա բնակավայրի շրջանը[3] նշուած է որպէս Աւարայրի դաշտ, հետեւաբար նաեւ որպէս 451 թ. ճակատամարտի վայր:

2. Պատմաբան Կ. Կոստանեանցը Աւարայրի ճակատամարտի վայր էր համարում Ղարազիադինի դաշտավայրը՝ Չուրսից (Չորսից) հիւսիս[4]: Այդ հարցում նա համաձայն էր Գ. Շիրմազանեանի հետ, որը դեռեւս 1877 թ. «Արարատ» հանդէսում ապացուցում էր, որ ճակատամարտի վայրը նշուած դաշտավայրն է, իսկ Աղ-չայը[5] հին Տղմուտ գետն է[6]: Գ. Շիրմազանեանի տեսակէտը, Կ. Կոստանեանցից բացի պաշտպանում է պրոֆ. Ե. Տէր-Մինասեանը[7]:

---

[1] Մարտիրոսյան 1988, 82-88:

[2] Агабекян 1967, 91-114.

[3] Խորհրդային 1:200000 մասշտաբով ռազմական քարտէզում Զանգեմարի (նաեւ՝ Զենգեմար) նշեալ ձախ վտակը կոչւում է Ղզըլ-չայ (Кызылчай), իսկ այս գիւղը՝ Զաւիէ (Զաւիէ-Փային եւ Զաւիէ-Բալա երկու գիւղեր Ղարաէյնի աւանից 10 կմ հիւսիս-արեւմուտք): Նշելի է, որ այս հովիտը Վասպուրական նահանգի **Մարդաստան** գաւառի հարաւային հատուածն էր:

[4] Կոստանեանց 1877, 119:

[5] Այս Աղ-չայը Վասպուրական նահանգի Թոռնաւան եւ Ճուարշ-ռոտ (նաեւ՝ Ճուաշռոտ) գաւառների տարածքով արեւմուտքից արեւելք հոսող՝ Կարմիր – Կոտոր գետի ձախակողմեան ամենամեծ վտակ պատմական Ճուարշն է, որի անունը պահպանուել է մեր ժամանակների Չորս-Չուրս գիւղանուան մէջ (գետի ստորին հոսանքում, Ղարազիադին-Կարազիադին աւանի մօտ): Տե՛ս Երեմյան 1963, 64; Հարությունյան 2001, 366-367:

[6] Տե՛ս Շերմազանեանց 1863; 1872, 423-427, 463-470; 1873, 185-188:

[7] Եղիշե 1946, 300, ծնթ. 135՝ «Արտազու դաշտ...» (Բ, լրացեալ հրատ. մէջ՝ նոյնն է, տե՛ս Եղիշե 1958, 205, ծնթ. 118): Այս տեղադրութիւնն ընդունում էր դեռ